

«Գյուղական համայնքների զարգացում»
 ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	<p>«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (COAF) նպատակն է բարձրացնել գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելը ներառում է զուգահեռաբար իրականացվող կրթական, առողջապահական, սոցիալ-հոգեբանական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքների վերանորոգումներ, բարելավումներ: Կրթական ծրագրի նպատակն է շահառու համայնքներում առաջադեմ կրթական միջավայր ստեղծել ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով: Առողջապահական ծրագրի նպատակն է պահպանել և բարելավել գյուղերում ապրող երեխաների և մեծահասակների առողջությունը և կանխարգելել հիվանդությունների առաջացումը՝ շեշտադրելով առողջ ապրելակերպի խրախուսումը և որակյալ առաջնային առողջապահական ծառայությունների հասանելիությունը: Երեխայի և ընտանիքի աջակցության ծրագրի նպատակն է ձևավորել ամուր և հոգեպես առողջ, ինքնակազմակերպված համայնքներ, որոնք ի վիճակի են հոգ տանել համայնքի երեխաների մասին՝ ապահովելով երջանիկ մանկություն, բազմակողմանի զարգացում և խոստումնալից ապագա: ՔՈԱՖ ՍՄԱԲ-ի ստեղծման նպատակն է նպաստել գյուղական համայնքների արագ զարգացմանը՝ դրանք աշխարհին հաղորդակից դարձնելու միջոցով: Որպես ոչ ֆորմալ կրթական ծրագրի մաս կազմող գերազանցության կենտրոն՝ ՔՈԱՖ ՍՄԱԲ-ը ժամանակակից հաղորդակցային ու տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով աշխարհի լավագույն մասնագետներին ու ռեֆորմատորներին կապում է գյուղերի հետ՝ տարածելով կրթության, առողջապահության, արվեստի, գիտության, շրջակա միջավայրի ու տեխնոլոգիայի բնագավառների առաջատար փորձն ու մեթոդները:</p>
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	<p>Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով՝ օրենքով սահմանված արտոնություններից:</p>

3.	Բարեգործը	«Չիլդրեն Օֆ Արմենիա Ֆանդ Ինք.», Նյու Յորք, ԱՄՆ, 149 5րդ ավենյու, սենյակ 500 (Children of Armenia Fund Inc. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA. և դոկտոր Գարո Հ. Արմենը:
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ քաղ. Երևան 0010, Մելիք Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 02569972):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	<ul style="list-style-type: none"> • ՀՀ Արմավիրի, Լոռու, Տավուշի և Արագածոտնի մարզեր, • Բարեգործական ծրագրեր նշված մարզերի համայնքների բնակիչներին, այդ թվում նյութեր, պարագաներ, սարքավորումներ և այլ բեռներ ներմուծելու միջոցով, • Կրթական, առողջապահական, սոցիալական, տնտեսական և գյուղատնտեսական ծրագրերի իրականացում, • Շինարարական նյութերի ձեռքբերում և շինարարություն:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 612,060,000 (վեց հարյուր տասներկու միլիոն վաթսուհազար) ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	<p>Արմավիրի մարզ՝ Քարակերտ համայնք, Մյասնիկյան համայնք, Լեոնագոգ համայնք, Դավարիկ համայնք, Շենիկ համայնք, Հացիկ համայնք, Վանանդ համայնք, Գետաշեն համայնք, Սարդարապատ համայնք, Արգիսա համայնք, Երվանդաշատ համայնք, Բազարան համայնք և Բաղրամյան (Բաղրամյանի շրջ.) համայնք:</p> <p>Արագածոտնի մարզ՝ Արտենի բնակավայր և Արագածավան բնակավայր:, Լոռու մարզ՝ Թումանյան քաղաք, Դսեղ համայնք, Քարինջ բնակավայր, Մարց բնակավայր, Դերբետ համայնք, Եղեգնուտ համայնք, Վահագնի համայնք, Ձորագյուղ համայնք, Աքորի բնակավայր, Մեծ Այրում բնակավայր, Արևածագ բնակավայր, Անտառամուտ համայնք, Ձորագետ համայնք, Փամբակ բնակավայր, Վահագնաձոր համայնք, Օձուն բնակավայր, Չկալով համայնք, Դարպաս համայնք, Բազում համայնք, Լերմոստովո բնակավայր, Ազնվաձոր համայնք, Արջուտ բնակավայր, Լորուտ բնակավայր, Մարգահովիտ համայնք, Գուգարք համայնք, Շահումյան համայնք, Լեոնապատ համայնք, Հազվի բնակավայր, Ալավերդի քաղաք և Վանաձոր քաղաք: Տավուշի մարզ՝ Այգեհովիտ բնակավայր, Վազաշեն բնակավայր և Կոթի բնակավայր:</p>

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի մարտի 20-ից մինչև 2022 թվականի ապրիլի 1-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<ul style="list-style-type: none"> • Տնտեսական ծրագիր ընդամենը 26,000,000 ՀՀ դրամ: <ul style="list-style-type: none"> ○ Լոռու մարզի, Դեբետ, Դսեղ, Չկալով, Վահագնի և Եղեգնուտ համայնքներում թվով 10 նոր բիզնեսներին ֆինանսական և խորհրդատվական աջակցություն: Յուրաքանչյուր բիզնեսի համար նախատեսված է 2,600,000 ՀՀ դրամ: Ամբողջ ծրագրի ընթացքում 26,000,000 ՀՀ դրամ: • Ենթակառուցվածքների ծրագիր ընդամենը 312,000,000 ՀՀ դրամ: <ul style="list-style-type: none"> ○ Արմավիրի մարզի, Գետաշեն համայնքի «Գետաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերանորոգում՝ ընդհանուր 27,000,000 ՀՀ դրամ, ○ Արմավիրի մարզի, Մյասնիկյան, Դավարիկ կամ Հացիկ համայնքներից մեկում «Մանկան Զարգացման Կենտրոնի» հիմնում: Նախատեսվում է նախագծել և վերանորոգել մինչև 300 ք/մ տարածք ու կահավորել՝ ընդհանուր 31,000,000 ՀՀ դրամ, ○ Լոռու մարզի, Դեբետ համայնքում 10 կմ երկարությամբ ճանապարհի նախագծում և հիմնանորոգում 100,000,000 ՀՀ դրամ, ○ Լոռու մարզի, Դեբետի համայնքապետարանի կից փողոցի, համայնքապետարանի շրջակա տարածքի և ավտոկայանատեղիի արտաքին լուսավորության ցանցի կառուցում՝ ընդհանուր 5,000,000 ՀՀ դրամ, ○ Լոռու մարզի, Դեբետի համայնքապետարանին կից ճանապարհի սկզբից մինչև Դետետի միջնակարգ դպրոցի սահմանի վերջ գագի խողովակի ստորգետնյա մոնտաժման աշխատանքների իրականացում՝ ընդհանուր 8,000,000 ՀՀ դրամ, ○ Լոռու մարզի, Դեբետ համայնքի սեփականությունը հանդիսացող տարածքում զբոսայգու և խաղահրապարակի հիմնում 30,000,000 ՀՀ դրամ, ○ Լոռու մարզի, Դեբետ համայնքի ամբողջ տարածքից արդյունաբերական և կենցաղային աղբի հավաքագրում և տեղափոխություն Արջուտի աղբավայր՝ 35,000,000 դրամ, ○ Լոռու մարզի, Դեբետ համայնքում ավտոբուսի կանգառի կառուցում ընդհանուր 10,000,000 ՀՀ դրամ,

		<ul style="list-style-type: none"> ○ Լոռու մարզի, Վահագնի համայնքում «Այցելուների կենտրոնի» կառուցում՝ 40,000,000 ՀՀ դրամ: Այս կենտրոնը նախատեսվում է կառուցել միջպետական Մ6 մայրուղուն հարող տարածքում: Այն գործելու է հիմնադրամի տուրիստական ոլորտի զարգացմանն ուղված ծրագրերի շրջանակներում, ○ Լոռու մարզի, Վահագնի համայնքի տարածքում «Այցելուների կենտրոնի» շահագործման համար նախատեսված սարքավորումների ձեռքբերում ընդամենը 20,000,000 ՀՀ դրամ, ○ Արմավիրի մարզի, Հացիկ համայնքում խաղահրապարակի տեղադրում 3,000,000 ՀՀ դրամ, ○ Տավուշի մարզում Այգեհովիտ, Կոթի և Վազաշեն բնակավայրերում, Լոռու մարզում Մեծ Այրում բնակավայրում գտնվող/գործող ՍՄԱԲ սենյակներում կոսմետիկ վերանորոգման և միջսենյակային ապակե պատերի և/կամ դռների տեղադրում ընդամենը 3,000,000 ՀՀ դրամ: <ul style="list-style-type: none"> • Առողջապահական ծրագիր 70,000,000 ՀՀ դրամ, ծրագրի վայրը հանդիսացող բոլոր համայնքներում: ○ Առողջապահական փաթեթների տրամադրում՝ դեղորայք, հիգենիկ պարագաներ 30,000,000 ՀՀ դրամ, ○ Բժշկական սարքավորումների ձեռքբերում 40,000,000 ՀՀ դրամ: • Կրթական ծրագիր ընդամենը 31,000,000 ՀՀ դրամ, ծրագրի վայրը հանդիսացող բոլոր համայնքներում: ○ Խմբակների աշխատանքի կազմակերպման համար նախատեսված նյութեր և պարագաներ ընդամենը 2,000,000 ՀՀ դրամ, ○ Տպագրական ծառայությունների ձեռքբերում 5,000,000 ՀՀ դրամի շրջանակներում, ○ Թվով 53 Համակարգիչների ձեռքբերում աշակերտների համար: Բաշխվելու է 14 հատ Շենիկ, 13 հատ Քարակերտ, 13 հատ Արտենի և 13 հատ Արագածավան բնակավայրերում: Ընդամենը 16,000,000 ՀՀ դրամ, ○ Լեզո ոռոգոտ տեսակի կրթական հավաքածուների ձեռքբերում թվով 11 ճարտարագիտական ակումբների համար: Յուրաքանչյուր ակումբի համար նախատեսված է 3 հատ Մայնդսթորմ
--	--	--

		<p>(Mindstorm), 3 հատ ՎիԴու (WeDo) և 1 հատ Ընդլայնված (Expansion) հավաքածուներ: Ընդամենը 6,000,000 ՀՀ դրամ,</p> <ul style="list-style-type: none"> ○ Սպորտային պարագաների ձեռքբերում արևելյան մարտարվեստի և բասկետբոլի խմբակների համար ընդամենը 2,000,000 ՀՀ դրամ: • Երեխայի և ընտանիքի աջակցության ծրագիր ընդամենը 5,000,000 ՀՀ դրամ, ծրագրի վայրը հանդիսացող բոլոր համայնքներում: ○ Սոցիալական աշխատանքի կազմակերպման համար նախատեսված նյութեր և պարագաներ ընդամենը 1,500,000 ՀՀ դրամ, ○ Հոգեբանական ծառայությունների մատուցման համար նախատեսված նյութեր և պարագաներ ընդամենը 3,500,000 ՀՀ դրամ, • ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի ծրագրեր ընդամենը 49,000,000 ՀՀ դրամ: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի ծրագրերն են Անգլերենի, Ռուսերենի, Չինարենի, Ֆինանսների, Կառավարման, Մարքեթինգի, Նկարչության, Թվային նկարչության, Կատարողական արվեստի, Ձայնային ձևավորման, Երաժշտական գործիքների, Վոկալի, Ծրագրավորման, Մեխանիկայի, Ագրոտեխնոլոգիայի, ՎԻ Ֆիթնեսի (վիրտուալ իրականություն), Պարի, Յոգայի դասընթացները, Մանկան գարգացման կենտրոնը և «ՍՄԱՐԹ քաղաքացի» հավելվածը: Նշված բոլոր կրթական ուղղությունների համար նախատեսված է՝ ○ Կրթական նյութեր ամբողջ ծրագրի ընթացքում 6,000,000 ՀՀ դրամ, ○ Նորարարական նյութեր ծրագրերի համար ամբողջ ծրագրի ընթացքում 10,000,000 ՀՀ դրամ, ○ Ծրագրային ապահովումներ ամբողջ ծրագրի ընթացքում 7,000,000 ՀՀ դրամ, ○ Թվային գրադարանի բաժանորդագրություն ամբողջ ծրագրի ընթացքում 5,000,000 ՀՀ դրամ, ○ Համակարգիչների ձեռքբերում ամբողջ ծրագրի ընթացքում 16,000,000 ՀՀ դրամ, ○ Այլ կրթական և տնտեսական նյութեր ամբողջ ծրագրի ընթացքում 5,000,000 ՀՀ դրամ: • ՍՄԱՐԹ սենյակներ ընդամենը 8,500,000 ՀՀ դրամ: ○ Ծրագրային նյութեր և պարագաներ՝ գրքեր, կրթական հավաքածուներ, համակարգչային ծրագրեր, ընդամենը 7,000,000 ՀՀ դրամ,
--	--	---

		<p>○ Ինտերնետի ամսական վճար 4 սենյակների համար ամսական 124,800 ՀՀ դրամ՝ տարեկան 1,500,000 ՀՀ դրամի շրջանակներում:</p> <ul style="list-style-type: none"> • Կազմակերպական ծախսեր ընդամենը 110,560,000 ՀՀ դրամ:
10.	<p>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<ul style="list-style-type: none"> • ՀՀ տարածքում նախատեսվում է ձեռք բերել 151,100,000 ՀՀ դրամին համարժեք շինանյութ և կառուցապատման համար անհրաժեշտ պարագաներ (ամրան, ցեմենտ, քար, թիթեղ, ապակի, պատուհան, դուռ, երկաթ, մեխ, շինարարական հատուկ հագուստ, ցանկապատ, ցանց), տնտեսական ապրանքներ, խաղահրապարակի համար անհրաժեշտ պարագաներ, խաղեր, դեղորայք, բժշկական պարագաներ, գրենական պիտույքներ, կրթական ծրագրերի համար անհրաժեշտ պարագաներ և նյութեր, գրքեր, քարտեզներ, սպորտային համազգեստ, համազգեստ, շապիկ, գլխարկ, կրթական ծրագրային ապահովումներ, համակարգիչ, պլանշետ, հեռախոս, ինտերնետային մոդեմ և այլն՝ ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: • Նախատեսվում է ներմուծել 86,000,000 ՀՀ դրամին համարժեք խաղահրապարակ, բժշկական սարքավորումներ, համակարգիչներ, լեզո կրթական հավաքածուներ, գրքեր, շորեր, համազգեստներ, գլխարկներ, շապիկներ և այն՝ ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: • Նախատեսվում է կնքել 374,960,000 ՀՀ դրամին համարժեք նախագծման աշխատանքների կատարման, շինարարության վերահսկողության, հեղինակային հսկողության, կապալի, խորհրդատվության տրամադրման, ապրանքների մատակարարման, վառելիքի ձեռքբերման, վարձակալության, իրավաբանական խորհրդատվության մատուցման, սննդի և ռեստորանային ծառայությունների, տպագրական ծառայությունների, ինտերնետային և բջջային ծառայությունների, առաքման ծառայությունների, տրանսպորտային ծառայությունների, աուդիտորական ծառայությունների, IT ծառայությունների և հյուրանոցային ծառայությունների ձեռքբերման պայմանագրեր՝ ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում:
11.	<p>Ծրագրի իրականացման հետ կապված</p>	<ul style="list-style-type: none"> • Կազմակերպական ծախսեր ընդամենը՝ 110,560,000 ՀՀ դրամ:

	կազմակերպական ծախսերը	<ul style="list-style-type: none"> ○ Գրասենյակային տարածքի վարձակալություն Երևան քաղաքում (Մելիք Ադամյան 2/2 հասցեում) 01.04.2021 թ. - 01.04.2022 թ. ընդամենը 56,160,000 ՀՀ դրամ (ամսական 4,680,000 ՀՀ դրամ) ○ Գրասենյակային պարագաների ձեռքբերում ընդամենը 2,600,000 ՀՀ դրամ ○ Ինտերնետային և ձայնային ծառայությունների ձեռքբերում ընդամենը 7,800,000 ՀՀ դրամ ○ Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում 2021 ֆինանսական տարվա համար ընդամենը 7,000,000 ՀՀ դրամ, ○ Վառելիք 15,000,000 ՀՀ դրամ, ○ IT ծառայություններ (ծրագրային ապահովում, համակարգչային տեխնիկայի ձեռքբերում) ընդամենը 7,000,000 ՀՀ դրամ, ○ Անձնակազմի զարգացման և ժամանցին ուղղված ծախսեր ընդամենը 5,000,000 ՀՀ դրամ, ○ Իրավաբանական և խորհրդատվական ծառայություններ ընդամենը 7,000,000 ՀՀ դրամ, ○ Այլ ծախսեր 3,000,000 ՀՀ դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության Լոռու, Արմավիրի, Արագածոտնի և Տավուշի մարզպետարանների և նշված մարզերի համայնքապետարանների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն ինականացվելու է բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմինը օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Տ. ԱՎԻՆՅԱՆ